

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻԻ ԽԱՄՈՐ	
Վ. առնա	Ֆր. 1.50
Վ. առնայէն գուր	2
Ս. րատաւ հման	2.50

ԿԱՏԱԿ

ԳՐԱԺԻՆԵՐ ԽՈՂԵՆ ԳՐԿԵՐ :	
Նամակ գրամ և ողն գրկել հե-	
տեւեալ հասցէին ,	
Վ. ԱՐԶՈՒԹԻՒՆ ԿԱՏԱԿ Ի	
Վ. առնա (Պուլխարիս) :	

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието
„ГАДАГЪ“
ВАРНА (България).

Հատը 7 1/2 Սանթիմ

Administration du journal
« GADAG »
VARNA, (Bulgarie).

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Համակերպին ալ բան մ'է :

Նոյն իսկ ամենաբարձր յառկութիւնն ինքն՝ որչափ ալ առաքինութիւն կամ առ լիորակն դարձած աղնիւ ու աղնուական շողաղներով երեւոյթ ստանան , սակայն առանց համակերպութեան չեն կրնար ունենալ այն արժէքը ու արդիւնքը որ չափ երեւակային անոր հեղինակ ու մը տաժողները :

Մեր մէջ շատ մտածողներ կան , նոյն չափ ալ խօսողներ , սակայն երբ կուգայ կարգը համակերպութեան , ամեն ոք իր պորնան կ'երգէ ու իր թմբուկը կը չափէ :

Ասկէ մէկ ու կէս ամիս առաջ կատակ մը ըրինք մեր մէկ երկու բարեկամաց հետ ու այդ կատակը հրապարակ դըրինք տեսներու համար թէ՛ ո՞ր կ'ապրինք , իսկապէս կատակի դա՞ր մ'է , ու բուն մէջ ապրելու դժբաղդութիւնը կամ չը դժբաղդութիւնը տեսնէք . կարճ ժամանակի մէջ համազում գոյացուցիւք թէ՛ հայ ժողովուրդը՝ կատակ թէ՛ չը կատակ կը փափաքի իր գգացած ներքին կեանքին ու իր ճանապարհին վրայ խօսուած գրոյցներ ըսել փոխանակ այն բարբաճաւնայ՝ որով օրօրեցին ու գեռ կ'օրօրեն

ազգը երեւակայական երազներու մէջ , կատարելապէս անքրիշտական քերականութեամբ և հայ ժողովուրդը քառակէքառ , անդունդէ անդունդ գահավիժելով , փորձերը , հետեւանքն ու արդիւնքը բացարձակապէս այսօր մեր դէմը կանգնած մեզ կ'այապանեն , մեզ կը յանդիմանեն ու վերջապէս մեզ կը հայհոյեն :

Մարթինի , մալդէրի ու էվինզի ղէնքերէն աւելի բոմբիւնով ժողովուրդի տնէժքն ու իշոցքը ունինք մեզ դէմ պատուար ու պատնէշ . Բլէվնայի բերդէն աւելի ամուր ու անառիկ արգելք մը կը անկուի մեր գործառնութեանց առջեւ , կեղծաւորներէն թեւադրեալ անկեղծներուն դէմ իսկ անցքն ու դուռն փակ պահելու . ժողովուրդի յուսախաբութենէն ծագում ու ծնունդ առած անկերպարան վիճակն է այս , որ իւր տիեզերապոռոյտ նշանակութեամբ ամենուն աչքին առջեւ , սրտին ու հոգւոյն մէջ , մահաւանդ գրպանին մէջ կը տիրապետէ :

« Կատակ » ի քիչ առուր մէջ գտած ընդունելութիւնն ու վայելած համակրութիւնն բացէ ի բաց նշան մ'է որ , հայ ժողովուրդն ալ սկսած է տեսնել իր առջեւ բացուած խրամապն . մանրադէտ մը պէտք էր որ ազգային ուսիճներն ու ցէ-

ցերը ցոյց տար և այդ մանրագէտի պաշտօնը իր վրայ առաւ «Կատակ» :

Այո՛, «Կատակ» իր առաջին քայլին մէջ ցոյցուց ազգային անդաստանը ապականող ուտիճներն, գոհ ու շնորհակալ իր առած քայլին համար . . . :

Ժամանակը դեռ չատ բաներ ցոյց պիտի տայ, և ժողովուրդը երթալով պիտի հասունանայ իր կատարելիք դերին մէջ, բայց մենք կ'ըսենք թէ՛ դեռ կանուխ է տեսնել այդ երջանիկ օրը : Ըստ որում համակերպութիւնն ալ բան մ'է ըսինք, ուստի մեր ստուար համակրողաց բաղձանքներուն առջև խոնարհեցանք և «Կատակի անխորժ անունին տեղ պարտաւորեցանք մի այլ անունով երեւիլ. Եւ որովհետեւ ուրիշ ատեն ըսած էինք թէ՛ երբ թերթ մը ունենայինք անունը կոխ կամ կռուան կը դնէինք, ահա այս անգամ որոշեցինք «Տաւրոս» դնել, որը իր ստեղծուած թուականէն ի վեր կ'ուսնէրու ասպարէզը եղած է . մեծանուն Արամի շահատակութեանց վայրը, զիւրյաղնոգի գող վատիլ իշխանի հարկները, տղնուատում Ռուբէնի պաշտպանարանը, քաջ Թորոսի հրաշապան՝ յաղթութեանց տեղը ու մեր երիցս զիւրյաղնացեալ ասպետական Զէյթունցիին լեռնավայրը :

«Տաւրոս»ը մէկ ամիսէն երեւան կը գայ մեծ ծաւալով և իւր անուան արժանավայել տեղքով, «Կատակ»ի յար և նման կարուկ ուղղութեամբ, պիտի խորադանէ ղեղձումներն, կեղծն ու սուտը . ամենուն գէժալ կծու ու կարուկ բանադատութեամբ, այս է իր պաշտօնն ու դերն և այս պիտի ըլլայ իր բոլոր ընթացքն ու ուղղութիւնն :

«Տաւրոս»ը իր բանագատականներէն զատ պիտի պարունակէ քաղաքական ու ազգային ըլլժ տեսութիւններ, պաշտօնական հեռագրաւորներ, ղուարճալի ա-

սացուածներ և մանաւանդ՝ կիրիկիոյ, Տաւրոսի լեռնագօտիին մէջ ծրարուած այնքան հետաքրքրական անցեալներու իսկատիպ պատկերներ որոնք մինչեւ այսօր ալ մութը մնացած են մեր սիրելի ազգէն ու ժողովուրդէն :

Աւանց համակերպութեան չէ կարելի միութիւն, և առանց անկեղծութեան, հաշուի ու խոստովանութեան եղած միութիւնը միութիւն չէ, այլ նորաձեւ գողութիւնն ու խաբէութիւնն միութիւն ըսած փայլուն անուան տակ :

Համակերպիլ պէտք է հանգամանքներու առջեւ, համակերպիլ պէտք է ժամանակի պահանջմանց առջեւ և համակերպիլ պէտք է իրարու գէժ. մենք հակառակ չենք միութեան, հակառակ չենք համակերպութեան երբ մեր առջեւ կը տեսնենք անկեղծ գէժներ :

«Տաւրոս»ի բաժնորդ ազրութիւնն այսօրուրն կը բանտնք, որոյ տարեկան բաժնեդիւնն է 10 ֆրանք Պուլկարիոյ և 12 ֆր. արտասահմանի համար :

Յ. ՉԱՔՐԵՅՆ

Մ Ե Ր Շ Ո Ւ Ր Զ Ը

Մի քունի օր առաջ երեք դժբաղդարտրածներ կմախք դարձած, գերեզմանէ փախած ուրուականներու պէս Ռուսճուքէն կը նետուին վառնայի հըրապարակը : Մէկը՝ անմեղ փոքրիկ մը, իսկ միւս երկուքը ժամանակէն առաջ ծերացած և խորշումներով զարգարուած հալ և մոշ ամուսիններ, որոց միակ մը տուծումն եղած էր պաշտպանել անօթութեան գէժ իրենց պղտիկին կեանքը, իրենց դոյութեանէն առաջ :

Ի Ռուսճուք ի զմէր աշխատած էին ապահովել իրենց չոր հացը և ավստոյ շատ օրեր ղգացած էին աղիւի գալա-

յուսմներ հազար ու մէկ անտարբեր նայաւ առձքներու տակ :

Եկած էին վառնաւ այն յուսով, ինչ յուսով որ մեր բոլոր դաշխանները կը դաւարակուին առդին անդին հովերու մասնուած ձեան հառիկներու պէս, մինչեւ որ հատնին, մինչեւ որ կորսուին անհիշատակ ու դժբաղդ

Ձգէ հացը, հիմայ գիշերելու տեղ մը պէտք էր իրենց. չոր տախտակ մը հանգչեցնելու իրենց պղտիկին գլուխը, որ մաւթին մէջ հազարերորդ անգամն ընլալով կրկնէին իրենց ամենօրեայ արամախօսութիւններ Աստուծոյ հետ կամ Աստուծոյ դէմ :

Ձիւ ժամեր կը կատարեն մէֆիֆի դերը, կը դիմեն հարուստներու, կը ջրհուին քաղաքաբեռութեան, կերթան ու կուգան և մանկան ճիշտ արցունքներ կը խլէ տեսողներու աչքէն, որ տեսակ մը հոգեկան անբացատրելի ռազմապաշտ կը համակուին, առանց սակայն առարկնութեան, դժոյ մէկ գործնական մարմնին զգալու ի տես այդ աղէկաւոր պատկերին

Ի զուր էին դիմումներ. ի զուր էին աղաչանք. ի զուր լաց ու կոծ : Ոչ ոք կարգահատէր. իրենց աղի արցունքներուն փոխարէն իրենց շուրջ կը թափուէին հազար ու մէկ պղատոնական ցաւակցութիւններ և ուրիշ ոչինչ :

Կը հաւատա՞ք, երբ բոսմ թէ վիճակուած էր իրենց շներու պէս կծկալի փողոցին մէկ անկիւնը, եթէ առարկնին Յ. Տ. տեղ չը տար իր կրակակին մէջ և չաղատեր զանոնք մահուընէ աւելի սուկալի վիճակէ մը

Բարեկամներ, մի ձանձրանաք լսելէ կեանքի մասնաւորութիւններ, որոնք այսօրուան հանրային կեանքը կը պատկերեն ճշգրտօրէն և սին կուլներու տեղ,

պառակաւորումներու տեղ, հայհոյելու տեղ և վերջապէս ազգասպան ըլլալու տեղ կուսուցանեն ձեզ ամեն ժամանակէ աւելի մէկ սիրտ մէկ հոգի ըլլալու, եղբայրական համբոյներ փոխանակելու և Անմահն Պէշիքթաշլեանի «Եղբայր ենք մենք»-ը երգելու քաղցրագոյն հարկը :

Ուստի մտիկ ըրէք :

Տիւնճէ

ՓՈՔՐԻԿ ՆԱՍՏԱԿՆԵՐ

Գ

Ով որ մի քիչ մօտիկից դիտէ մեր բաղմաթիւ «Եղբայրականներին» որ կուսակցութեան էլ նոքա պատկանին և որ տեղացի էլ լինին և լսէ նոյա խօսակցութիւն՝ մի զարմանալի և միայն մեր հայերի մէջ նկատելի երեւոյթ աչքի է ընկնում : Նոքա թողած գլխաւոր նպատակը, որի պատճառաւ հայ ժողովրդին այսքան անփոխարինելի զոհեր տալ տուին, տալ թող ժամերով, օրերով փոփոք բերանին տուած շատ անգամ վայրենի ֆիզիքական ոյժին դիմելով կուտում են կուսակցութիւնների համար : Կարծես այդ կուսակցական անմիտ կռիւների չը հասկացած Եւրոպական բուրժուական մէջն է ամբողջ ժողովուրդի կեանքը :

Օրինակ, Մշակի գաշակցականը բուրժուական չի հետաքրքրւում իր ծնդավայրի վիճակով, նա չիմանում, արդեօք Մշակ գաշտում հայեր մնացել են և եթէ կան, ի՞նչ վիճակի մէջ են . նա կատաղաբար վիճում է այնպիսի բաների մասին, որոնց համականալու համար հարկաւոր է տասնեակ տարիների մտաւոր աշխատանք : Տարնոյ այդ միամիտ զաւակը, ընկնելով Թիֆլիզի կիսակիրթ, կեանքի ուրիշ տապալէզում յաջողութիւն չը գտած բողոքականիւր պարոններից մէկի ձեռք մի քանի օրից յետոյ դառնում է

«դաշնակցական» և ընկնում աշխարհի չորս կողմ և խօսում բնաւորական հարցի, կեդրոնացման և ապակեդրոնացման և այլն նիւթերի մասին և հայ ժողովուրդը պարտական է նրան կերակրել և իւր արիւն քրտինքի գին սանթիմներ զրկելու հռչակաւոր «բիւրօն», որպէս զի նա կարողանայ իւր «կուսակիցներին» կերակրել. իսկ վերջիններս պարտականութիւն է պաշտպանել բիւրօն նրա ճոխ սեղանից թափած փշրանքների համար . . . :

Մեր մէջ «յեղափոխական», այն էլ Եւրոպական ամենաթուեղ գաղափարներով յեղափոխական դարձնելուց հետո բան չը կայ: Գիտէ՞ք ընթերցող, երբ մի վաղիկ հարցերէն փշտո ինչպէ՞ս կը շինեն, նա պատասխանել է «կտոր մը փէտ տօշեր են, փշուր մը ալիւր ցաններ են, կարմիր շապիկ հագուցեր են և անուն դրեր են փշտո»: Ճիշդ այդպէս էլ մեր աշխարհահռչակ բիւրօն պատրաստում է իւր կուսակիցները: Հայաստանցուն վերջուցեր են ապրելու միջոցներ տալու խոստում, որին, սովորեցրել են արաւսանել միքանի բառեր, անուն դրել են դաշնակցական . . . և ահա մեր նոր թխած յեղափոխականը մոռացած իւր հայրենիքը, իւր թշնամիները՝ թուրքն ու քիւրաքը, որոնք իւր երկիրը սպանդանոց են դարձրել, նա կուռում է և շատ անգամ սպանութեան դիմում կուտակցութիւն պաշտպանելու համար:

Սրանից մի քանի տարիներ առաջ մի օր «ապակեդրոնացման» մի մեծ ներկայացուցիչի հետ անցնում է Թիֆլիզի պարտէզներից մէկով, նստարանի մէկի վերայ նստած էր մի խեղճ Մշեցի, որը երևում էր նոր էր եկել իւր թշուառ հայրենիքից և գեռ գործ չը գաած նըստել էր այն տեղ և ո՞վ գիտէ ինչ դառն մտքեր նրան տանջում էին և կարելի է

մի քանի օր ոչինչ չէր կերել . . . : Իմ ուղեկիցս նոր սկսել էր «գործիչ» դառնալ և խնդրեց ինձ, որ մօտենանք «Հայաստանցուն»: Նա սկսեց Մշեցուն հարցու փորձ անել և ես ստիպուած թարգմանի դեր էի կատարում, որովհետեւ Մշեցին ուսներէն չէր իմանում, իսկ իմ ուղեկիցս «հայերէն իւր մտքեր չէր կարողանում արտայայտել» ինչպէս ասում էին Հայոց ապագայ սօցիալիստները . . . :

Ահա այդ խօսակցութիւնը:

Ո՞ր տեղացի ես: Մշեցի: Յետոյ Մշեցին պատմեց քրդի, տաճկի արածները: Դուք ինչո՞ւ չէք կուռում, որ ազատուէք: Մշեցին մի զարմացական հայեացք ձգեց մեզ վերայ և ասաց — ինչով կուռինք, տաճկի թօփ-թուփանք ունի, քիւրդ-նոյնպէս ոտից դուրս զինուած է, իսկ Մշեցին մի կտարած դանտակ չ'ունի ինչով կուռի: Իմ ուղեկիցս տեղց նրան իւր հոտցէն և հրաւիրեց երեկոյ իրեն մօտ և մենք հեռացանք: Անցան տարիներ, թշուառ տարիներ և ես անցեալներ նուրից պատահեցի այդ Մշեցուն: Բայց նա մակս երկարեց այս մօտին հետեւեալ անգամ:

Ի՞նչ

ԱԶԳԱՅԻՆ

— 0 —

Անցեալ կիրակէ հաւաքում մը տեղի ունեցաւ Վառնայի եկեղեցւոյ փակը, ներկայ էին միութեան համակրողաց 2-300ի չափ բազմութիւն մը, ուր խօսեցան աւուր պատշաճի հետեւեալ պարոնայք, Ա. Նարիկեան, Յ. Զաքարեան և Գ. Սիմքէշեան:

Հաւաքումը, նիւար էր նոյն օրուան տեղադրարափ անձրեւին պատճառաւ. ուստի որոշուեցաւ յառաջիկայ կիրակէ, յուլիս 13ին կրկին հաւաքուիլ Եկեղեցւոյ աւարտումէն անմիջապէս յետոյ ևս խորհիլ միութեան անհրաժեշտ եզրակացութեան վրայ: Հետեւաբար կը հրաւիրուին ամեն հետաքրքիր ազգայինք որ ներկայ լինին յիշեալ հաւաքման ու իրենց ականջով լսել թէ ի՞նչ կը խօսուին անդ:

Այս մասին «Կատակ» իւր ստանձին փութութիւնն պիտի հրատարակէ ուրիշ առթիւ:

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.